ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԻ ԵՒ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիշատակարանների երկրորդ խմբում, ինչպես արդեն նշել ենք, արձանագրված են նաեւ կուսանաց վանքերի անուններ:

Այս խմբի հիշատակարաններից ամենահինը Ժ. դարում (989 թ.) Մաղարդա վանքում գրված հանրահայտ «Էջմիածնի աւետարան»-ի հիշատակարանն է՝ թվագրված 1173 թվականով: Այն, այսպես կոչված, միաբանության գիր է, որը մեկ անգամ եւս հաստատում է այս վանքում եղած կուսանաց վանքի մասին տեղեկությունները:

«Յանուն Աստուծոյ ես **Տիրատիկին** [ա]ղախ[ին] Քրիստոսի միաբանեցայ Սուրբ Նախավկայիս:

Այլ զի եւ ես Տիկնաց, աղախին Քրիստոսի միաբանեցայ Նախավկայիս: Յասմ աւրէ ի հետ, զինչ մեր կարողութիւն լինի, ծառայութիւն առնենք սրբոյս:

Գրեցաւ յիշատակ»[1]:

Ըստ «Տեղանունների բառարան»-ի՝ հիշատակարանում մատնանշված Ս. Նախավկան Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն է, որ հայտնի է նաեւ Մաղարդավանք[2] անունով: Ըստ նույն այդ բառարանի՝ այն Մեծ Հայքի Նախճավան գավառի, նոր ժամանակներում՝ Մակուի խանության Դարաշամբի գավառի մեջ էր՝ Նախիջեւանից հարավ, Արաքսի աջ ափին, Մաղարդա լեռան ստորոտում: Վանքը կառուցվել է 976 թ. եւ օծվել Աշոտ Գ. արքայի եւ Խաչիկ Կաթողիկոսի օրոք: Բառարանում վանքի վերաբերյալ բերված է նաեւ ԺԷ. դարի ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի վկայությունը: 1688 թ. լինելով այս վանքում՝ նա արձանագրել է, որ վանքի պահպանված միակ կանգուն շինությունը Ս. Հակոբ քարաշեն եկեղեցին է, որն «ունի 2 ավանդատուն, աղյուսաշեն վերնատուն, կուսանոց»[3]: Կուսանոցի մասին այլ տեղեկություններ չկան, սակայն, դատելով վերոհիշյալ հիշատակարանի թվագրությունից, կարելի է ենթադրել, որ առնվազն ԺԲ. դարում այս վանքում արդեն իսկ գործել է կուսանոց: ԺԲ. դարի մեկ այլ կուսանոցի մա-

1 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ.», Երեւան, 1988, էջ 214:

2 Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, էջ 54:

3 Անդ, էջ 54:

սին հիշատակվում է 1295 թ. ընդօրինակված «Գիրք դատաստանի Մխիթարայ Գոշի» հնագույն ձեռագրի հիշատակարանում[4], որտեղ Մխիթար Գոշը տեղեկություններ է հաղորդում, թե ինչ հանգամանքներում, որտեղ եւ երբ է գրել իր այդ աշխատությունը. «...Ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց Մեծաց եւ ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի տանս Աղուանից, յաշխարհիս Առանայ, ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս եւ յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոյ, ձեռնտուութեամբ հաւր Յովսեփայ եւ եղբաւր Պաւղոսի յորդորմամբ առաջարկութիւնս»[5]:

Հիշատակված Հոռոմաշենը, որ հայտնի է նաեւ այլ անվանումներով, գտնվել է մեծ Հայքի Արցախ (կամ Ուտիք) աշխարհի Գարդմանաձոր գավառում[6]: Հոռոմաշենի կուսանաց անապատի մասին հիշատակում է նաեւ Ղեւոնդ Ալիշանը. «Յելից սոցա ընդ մէջ Շէմքոր եւ Խոչխարա գեղոց կան նշանաւոր տեղիք... Հոռոմաշէն աւերակ անապատն Կուսանաց եւ Դասնոյ անապատ, ուր Մխիթար Գոշ գրեաց զԳիրս Դատաստանացն...»[7]:

Ձեռագիր հիշատակարաններում, սակայն, միշտ չէ, որ նշվում է ձեռագրի ընդօրինակման վայրը, որի պատճառով անորոշ է մնում հիշատակված կուսանաց անապատի տեղագրությունը: Այսպես, 1495 թ. ընդօրինակված «Մաշտոց»-ի հիշատակագիրը նշում է միայն, որ ձեռագիրն ընդօրինակվել է Կուսից անապատում՝ առանց գտնվելու վայրի մասին որեւէ տեղեկության. «Եւ գրեցաւ ի յանապատս, որ կոչի Կուսից անապատ, սուրբ Աստուածածնի տաճարիս եւ սրբոց առաքելոց նշխարացս՝ Թադէոսի առաքելոյն, ի հայրապետութեան տեառն Սարգսի, եւ առաջնորդի սուրբ ուխտիս տէր Մաթէոսի, ի թաքաւորութեան Ուռուսդամի...»[8]:

Նշենք, որ վերոհիշյալ հիշատակարանները հատուկենտ վկայություններ են ԺԲ.-ԺԷ. դարերի կուսանոցների վերաբերյալ: Մինչեւ ԺԷ. դար հիշատակարանները հիմնականում կուսանոցների մասին լռում են:

Հայտնի է, որ Հայ Եկեղեցում կուսանոցների վերազարթոնքի դարաշրջան համարվող ԺԷ. դարը նշանավոր է հատկապես Սյունյաց աշխարհի կուսանոցներով: Այս մասին Ղեւոնդ Ալիշանը գրում է. «Նշանաւոր է ի սմին եւ յոլովութիւն Անապատից Կուսանաց, որպիսիք Շնհերոյն, Հօշանցն, Դափուց, Իլկեվանից, Նորատուաց եւ այլն. յայտ է թէ ի նորոգութեան վանական կարգաց յ՛ ԺԷ. դարու, հաստատեցան եւ կուսաստանք, այլեւ յառաջին դարս երեւին ծաղկեալ կուսութեամբ եւ անապատք Սիւնեաց»[9]:

ԺԷ. դարի հիշատակարաններում Սյունյաց աշխարհի կուսանոցներից առավել

4 Ա. Մաթեւոսյանը ներկայացրել է իբրեւ առանձին հիշատակարան: Իրականում այն «Դատաստանագրքի» առաջաբանի՝«Նախադրութիւն» բաժնի 11-րդ գլուխն է, որ կոչվում է «Յիշատակարան սակառք» եւ հանդիպում է «Դատաստանագրքի» ոչ բոլոր խմբագրություններում: Տե՛ս «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց», էջ 69-75. **Մխիթար Գոշ,** Գիրք դատաստանի, Երեւան, 1975, էջ 25:

5 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե.-ԺԲ. դդ.», էջ 243. տե՛ս նաեւ «Գիրք Դատաստանի», էջ 25:

6 «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, էջ 438:

7 **Ղեւոնդ Ալիշան,** Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 85:

8 «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. (1481-1500 թթ.)», հ. 3, էջ 472:

9 **Ղ. Ալիշան,** Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 23:

հաճախ նշվում է Շենհերի կուսանաց անապատը: Այն գտնվել է ՀՀ Գորիսի շրջանում, Շինուհայր գյուղի մոտ: Վանքի վերաբերյալ առանձնակի ուշագրավ է 1654 թ. Շենհերում Աստվածատուր քահանայի ընդօրինակած «Շարակնոց»-ի հիշատակարանը, այն առումով, որ արձանագրված է միանձնուհու հոգևոր՝ սարկավագուհու ասպիճանը: Աստվածատուր գրիչը նշում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «ի խնդրոյ սրբասնունդ դստերն իմոյ՝ **Ղէրիքնազ** հաւատոր սարկաւագուհոյն...»[10]:

Նշենք նաև, որ ըստ «Տեղանունների բառարան»-ի՝ կուսանոցի Ս. Աստվածածին եկեղեցին 1676 թ. կառուցել է Մուրադ ճարտարապետը ազուլիսցի մահտեսի Ազարիայի միջոցներով[11]: Բառարանում թերևս սխալմունք կա, քանի որ ավելի վաղ գրված հիշատակարաններում, ինչպես եւ վերոնշյալում, արդեն իսկ հիշատակվում է եկեղեցու անունը. «Գրեցաւ սա յամի հ[ա]զարու հարիւր եւ երեքին, ի գեօղն որ կոչի Շէնհէր, ընդ հովանեաւ Ս. Աստեփաննոսին եւ Ս. Աստուածածնի կուսանաց յանապատին»[12]:

Շենհերի կուսանաց անապատը, որ հայտնի է նաև իբրև գրչության կենտրոն, մեզ է ներկայանում նաև իր գրչուհի կույսերով: Նրանցից է Մարգարիտ գրչուհին: 1640 թ. Շենհերում նրա ընդօրինակած Աւետարանի հիշատակարանը փոխանցում է, որ Շենհերի վանքը գործել է Տաթեւի (Սպաթեի) վանքի հովանու ներքո. «Ի յայսմ ամի գրեցաք զսբ. Աւետարանս ի յերկիրս Ղափան, ի գեաւղս Շէնհէր, ընդ հովանեաւ Սպաթէի սբ. վանից եւ անապատաց եւ Ս. Աստեփաննոսի եկեղեցոյն...: Աստուած ողորմի ասէք մեզ՝ Ղազար եւ **Մարգարիտ** գրչիս եւ ծնողացն՝ Կիրակոս քահանային եւ Թուրվանդին, Աղուբշին եւ Խանումին եւ մեր հոգեւոր մայր **Խոսրով** ապաշխարողին»[13]:

1644 թ. Մարգարիտ գրչուհու ընդօրինակած «Յաստուածք»-ի հիշատակարանից տեղեկանում ենք նաև Շենհերում արական վանքի գոյության մասին: «Արդ՝ գրեցաւ տառս գերապատում ի թուականութեանս Հայոց ՌՂԳ., ի հայրապետութեան սբ. աթոռոյն Էջմիածնի տեառն Փիլիպպոսի, ի գեօղս Շէնհէր, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ Ս. Աստեփաննոսի եկեղեցեացս եւ երկու հրեշտակագումար վերնաշաւիղ սբ. մենաստանացս արաց ընտրելոց եւ կուսանաց մաքրելոց, ձեռամբ գերեալ անձին, մեղօք վարանեալ եւ նաւաբէկ ալեօք տատանեալ ի յընթացս կենաց շաւղին, մոլորեալ եւ մասանց բարեաց կողոպտեալ բազմասէր **Մարգարտիս**...»[14]:

Շենհերի կուսանաց անապատի ու նրա միանձնուհիների անուններն հիշատակվում են նաև Մարգարիտ գրչուհու եղբոր՝ Ղազար քահանայի ընդօրինակած ձեռագրերում: 1642 թ. Շենհերում ընդօրինակված «Շարակնոց»-ի հիշատակարանում կարդում ենք. «...Կարող զաւրութեամբն Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցի ըստ իմում կարողութեանս, ի վայելումն ընդանեաց իմոց // եւ կուսան քեռն իմոյ՝ **Մարգարտին** եւ... հոգեւոր մայր **Խոսրով** ապաշխարողին, եւ ամենայն արեան մերձաւորաց...»[15]:

10 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, Երեւան, 1984, էջ 608:
11 Տե՛ս «Տեղանունների բառարան», հ. 4, Երեւան, 1998, էջ 142:
12 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 608:
13 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1621-1640)», հ. 2, Երեւան, 1978, էջ 826:
14 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 152:
15 Սնդ, էջ 52:

1645-ին գրված մեկ այլ ձեռագրի՝ «Սաղմոսարան»-ի հիշատակարանում նույն Ղազար գրիչն արձանագրում է. «Գրեցաւ զՍաղմոս Դաւթի այսահալած մարգարէին, ձեռամբ Ղազար պիտակակոչի եւ քեռն իմոյ **Մարգարտի**, ի հայրապետութեան տեառն Փիլիպպոսի, ի յերկիրս Ղափան, ի գեօղն Շենհէր, ընդ հովանեաւ Սրաթէի սբ. առաքելոյն եւ սբ. անապատացս, ի թուականիս Հայոց ՌՂԴ. ամին, ի թագաւորութեան Պարսից շահ Ալի Արազին:

Աստուած ողորմի ասել սրացողի սբ. տառիս **Ռիփսիմէ** կուսակրօն հաւատառրի... եւ եղբօր դստեր կուսակրօն **Սոփիային**»[16]:

1655 թվականի ձեռագիր Աւետարանում Ղազար գրիչը կրկին խնդրում է աղոթքով հիշել իր ազգակիցներին, որոնց թվում՝ նաեւ Մարգարիտ կույսին[17]:

Շենհերի կուսանաց վանքի միանձնուհիներից է նաեւ Հեղինե գրչուհին: «Գրեցաւ սակաւ բանս ապիկար եւ անարժան **Հեղինէի** ապաշխարողի, ի յանապատն Շէնհերու, ի դուռն Ս. Աստուածածինն, ի խնդրոյ հարազատ եղբոր իմոյ՝ Մեսրոպ վարդապետի Սիւնեաց երկրին, թուին ՌՃԷ. (1659)-ին մարտի ԼԱ. (31)-ն. ի փառս Արարչին»[18],- կարդում ենք գրչուհու ընդօրինակած «Քարոզգրքի» հիշատակարանում:

Հեղինե գրչուհին ընդօրինակել է նաեւ երկու «Շարակնոց» (ընդօրինակված 1644 եւ 1647 թթ.), որոնց հիշատակարաններն ամբողջությամբ կրկնում են միմյանց: Գրչուհին թվարկում է իր ազգակիցների անունները՝ մեզ համար բացահայտելով ժամանակի բարեպաշտ մի ընտանիք: «Յերես անկեալ կրկին աղաչեմ զձեզ, մեղօք գերի գծող սորա **զՀեղինէ** անուամբ միայն ապաշխարեալ, եւ ոչ զգործս զիմ հեղացեալ: Զհայրն իմ՝ զմահտեսի Խաչատուրն, եւ զմայրն իմ՝ Թումայնաղայն եւ զկոյսակրօն քոյրն իմ՝ **զՄարիանէ** եւ զեղբարքն իմ՝ զՅովսէփն եւ զՄեսրոպ նախասարկաւագն, եւ զթոթի կոկոզն կոյս **Յուստիանէն**...»[19]:

1650 թվականին՝ «ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին եւ ի բնակութեան Շէնհերու յանապատին» Մարինոս գիրչն ընդօրինակել է «Յիսուս որդի» մատյանը, որի հիշատակարանում նշվում են Հեղինե եւ Վառվառ քույրերի անունները. «Արդ՝ երես ի գետնի դնելով աղաչեմ անապական արեան զառին գնեալքդ, յիշեցէք զանպիտան գծող սորա զՄարինոսս, եւ զծնաւղսն իմ զմիա//յնակեաց Խաչիկն, զմայրն իմ՝ Թումանաղան, եւ զեղբայրքն իմ՝ Մեսրոպ կուսակրօն քահանայն եւ Յովսէփն, զքոյրքն՝ **Հեղինէն** եւ **Վառվառ**, եւ ամենայն արեան մերձաւորքն իմ՝ զկենդանին եւ զհանգուցեալն յիշեցէք...»[20]:

Ուշագրավ են նաեւ 1656 թ. ընդօրինակված «Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ» ձեռագրի հիշատակարանները՝ գրված արդեն Հեղինեի եւ Մարինոսի կողմից: Հիշատակարաններում ձեռագրի ընդօրինակման վայրը նշված չէ: Սակայն, ամենայն հավանականությամբ, այն եւս ընդօրինակվել է Շենհերում: «Զեղկելի, գթարմատար գծող **Հեղինէս** յիշել աղաչեմ անմեղադիր լինել, զի ձմեռն էր եւ թանակն աւեր, ոչ կարացի ըստ

16 Անդ, էջ 181:
17 Տե՛ս անդ, էջ 659:
18 Անդ, էջ 853:
19 Անդ, էջ 151, 256:
20 Անդ, էջ 399:

պապշաճին գրել»[21],- իր աշխատանքի դժվարությունների մասին է հայտնում Հեղինե գրչուհին:

Մարինոս գրիչը Հեղինեին համարում է իր ուսուցիչը, «զհոգեւոր ու զմարմնաւոր քոյր», ապա եւ՝ «զկոյսակրօն քոյր»: «Եւ առաւել յիշեցէք ի յաղօթս ձեր զրաբունապետ վարդապետն իմ զՄեսրոբն եւ ուսուցիչն իմ՝ **զՀեղինէն**, որ բազում աշխատանք ունի ի վերայ իմ. Քրիստոս Աստուած ընդ սրբոյն Հռիփսիմնացն դասաւորեսցէ. ամէն»[22]:

Նույն ձեռագրի մեկ այլ հիշատակարանում կարդում ենք. «Եւ զՄեսրոբ վարդապետն եւ զծնողս իւր՝ զխաչայտուր եւ մայրն իմ՝ զԹումանն, եւ զհոգեւոր ու զմարմնաւոր քոյրն իմ՝ **զՀեղինէ**, որ բազում աշխատանօք սնոյց զգրագրութիւնս եւ զանարժան գրիչս յիշել աղաչեմ...»[23]:

Ձեռագրի եւս մեկ հիշատակարանում, Մարինոս գրիչը կրկին աղաչում է հիշել ծնողներին, եղբայրներին եւ քույրերին՝ «զկոյսակրօն քոյրն իմ՝ **զՀեղինէ** եւ **զՎառվառան**...»[24]:

ԺԷ. դարի հիշատակարաններում հանդիպող Սյունյաց աշխարհի կուսանոցներից է նաեւ Հալիձորի կուսանաց անապատը[25]:

1653 թ. կուսանոցի Հռիփսիմե մայրապետն ընդօրինակել է մի «Ժողովածու», որի հիշատակարանում[26] կարդում ենք. «Դարձեալ յերես անկեալ աղաչեմ, յիշել յերկնաթռիչ յաղօթս ձեր, զվերոյ գրեալքս ի սմա զվերակացուք անապատիս զվաստակասէր եւ ժիր մշակք Յիսուսի փրկչին մերոյ զտէր Մելիքիսեդս եւ զՄիքայէլս, որք ունին սոքա բազում աշխատանք ի վերայ անապատիս եւ ինձ: Ընդ նմին եւ զեղկելի զծողս եւ զանապատիս մայրապետ **զՀռիփսիմէն** եւ մարանապետ **Ուստիանէն** եւ այլ միեղէն մայրքս եւ քորքս, եւ ձեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած ի միւս անգամ գալըստեանն իւրում...»[27]:

Հալիձորի կուսանաց անապատում Եղիա[28] գրչի կողմից 1654 թ. գրված «Շարակնոց»-ի հիշատակարանը եւս տեղեկություններ է պարունակում կուսանոցի մասին. «Արդ՝ գրեցաւ սա ի յերկիրս Էճանան, ի գիւղս Հալիձոր, ի դուռն սբ. անապատիս, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Ս. Ստեփաննոսիս եւ Ս. Մինասիս: Արդ՝ աղաչեմ զձեզ, ո՛վ

21 Անդ, էջ 715:

22 Անդ, էջ 716:

23 Տե՛ս անդ:

24 Անդ, էջ 717:

25 Ըստ «Տեղանունների բառարան»-ի՝ գրնվել է այժմյան Կապան քաղաքից հյուսիս-արեւմուտք: Կառուցվել է ԺԷ. դարի առաջին կեսին: Հետագայում դրա տեղում, ԺԸ. դարի 20-ական թթ. սկզբներին Դավիթ Բեկը կառուցել է բերդ: Այս մասին է վկայում նաեւ Ղ. Ալիշանը. «Այլ առ աներկեւան ապահովութիւն՝ կառոյց Դաւիթ բերդ հզոր ի Հս. Մ. գեղջն՝ ի լանջս լերին, առ որով եւ Անապատ մի է Կուսանաց...»: Ըստ Ալիշանի՝ այդ շրջանում Հալիձորի կուսանոցում բնակվում էին 40-50 կույսեր: Սակայն Դավիթ Բեկի վախճանից շատ չանցած՝ «Նոյնպէս ամայացաւ եւ Ս. Աստուածածնին Անապատն Կուսանաց Հալիձորոյ...». տե՛ս «Միսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի», էջ 32-33:

26 Այս հիշատկարանին անդրադարձել է նաեւ **Ղ. Ալիշանը.** տե՛ս անդ, էջ 33:

27 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 551-552:

28 Հիշատակարանում նշված է Եղիասաբեթ անունը. «Գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ եւ եղեռնագործ, թշուառ անձին Եղիասաբեթ /// անձուկ ժամանակիս, վասն բազմանայոյ // անաւրէնութեան»: Վազգեն Հակոբյանը ծանոթագրում է, որ գրչի անունը ձեռագրում գրված է հապավված ձեւով «Եղի»: Մատենադարանի ձեռագրաց ցուցակում հարցականով կարդացվել է «Եղի [սաբե՞թ]: Վ. Հակոբյանը իբրեւ գրիչ նշել է Եղիա անունը:

սբ. մանկունք սբ. Սիոնի, որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ աղաթս ձեր զմաքրամիտ եւ սրբասնունդ Միքայէլ միայնակեացն եւ զհոգեւոր հայրն ///ն, որ է հարազատ հայր եւ հոգաբարձու սբ. ուխտիս, եւ մայրապետ սբ. կուսանոցիս **Հռիփսիմէն** եւ **Մախմորն**, եւ մարանպետ **Ուսպիանէն** եւ ամենայն միաբան ժողովելոցս եւ բարգեալ բնակելոցս ի սմա, կուսից եւ պառաւաց խնդրեալ ի Տեառնէ, զի կարարումն սոցա ի բարին եղիցի ի Քրիստոս Յիսուս, զի Տէր մեր որում փառք յաւիտեանս. ամէն»[29]:

Սյունյաց անապատներից զատ ԺԷ. դարի հիշատակարաններում առավել հաճախ հանդիպող կուսանաց անապատը պատմական Երնջակ գավառում (Նախիջեւան) Շոռոթի կուսանոցն է: «Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ...ի յերկիրս Երընջակ, ի գեօղաքաղաքս Շոռոթու, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս եւ Ս. Լուսաւորչի, եւ Ս. Յակոբայ եկեղեցեացս ի մէջ մաքրակենցաղ կուսաստանիս...»[30],- 1657 թ. ընդօրինակված «Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ» ձեռագրի հիշատակարանում արձանագրում է Մարգար գրիչը:

Շոռոթի կուսանաց անապատին վերաբերող մի քանի հիշատակարաններ արժեքավոր են հատկապես նրանով, որ տեղեկություններ են հաղորդում անապատի հիմնադրման վերաբերյալ: Այսպես՝ Շոռոթի կուսանաց անապատի հիմնադիր Վարդան քահանայի որդու՝ Հովհաննես վարդապետի պատվերով Շոռոթում ընդօրինակված «Ժողովածու»-ի հիշատակարանից տեղեկանում ենք, որ կուսանոցը հիմնադրվել է 1631 թվականին[31]: «Արդ՝ ես նուաստս եւ յետին ի բանասէրս Յովհաննէս անուամբ եւեթ կոչեցեալ վարդապետ, որդի տէր Վարդան քահանայի, որ զՍ. Աստուածածնի անապատս շինեացի ի գեօղաքաղաքս Շոռոթ, եւ ժողովեաց բազում կուսան կրօնաւորս եւ հաստատեաց եւ լցոյց ամենայն շինութեամբ եւ բարութեամբ, անպակաս հոգեւորօք եւ մարմնաւորօք, եւ ինքն փոխեցաւ առ յոյսն բնաւից ի տենչալին իւր: ...Արդ՝ աղաչեմ զձեզ սիրովն Քրիստոսի, ո՛վ լուսերամք դասք քահանայից եւ մանկունք սբ. եկեղեցւոյ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր միով Հայր մեղայիս, եւ Աստուած ողորմի ասելով զհայրն իմ՝ զտէր Վարդանն, որ մեծաւ ջանիւ եւ բազում աշխատութեամբ շինեաց զսբ. անապատս ի հալալ արդեանց իւրոց՝ եթէ պարիսպ //, եթէ եկեղեցին, եթէ տնտեստուն, խուցք եւ հիւրատուն եւ այլ շինութիւնք. եւ ժողովեաց բազում կուսանս ի սմա, եւ հաստատեաց անապատ ի ժամանակս Մովսէս կաթուղիկոսին, թվին ՌՁ. ամին»[32]:

Անապատի հիմնադրի՝ իր եղբոր հիշատակը ըստ արժանվույն է գնահատել նաեւ

29 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 608:

30 Անդ, էջ 767:

31 Ըստ Արգամ Այվազյանի՝ 1631 թ. Վարդան քահանան նախկին եկեղեցու հիմքերի վրա հիմնել է կուսանոցի Ս. Աստվածածին եկեղեցին, որ Ի. դարի 80-ականներին կանգուն է եղել: Եկեղեցին զարդարված է եղել ԺԷ. դարի որմնանկարներով, որոնք կատարել են Հովնաթանյան տոհմի նկարիչները: Ս. Աստվածածինն ունեցել է նաեւ գավիթ, իսկ շրջակայքում կույսերի համար մի շարք խցեր եւ տնտեսական այլ շինություններ՝ մինչեւ հիմքերն ավերված: Եկեղեցու մոտ տեղադրված խաչքարերից մեկը նվիրված է եղել եկեղեցու Վարդան քահանայի եւ նրա մերձավորների հիշատակին: «Սուրբ խաչս յիշատակ է Վարդան քահանայի սկիզբն եւ շինող սուրբ Աստուածածնիս եւ քեռ իւրոյ, Մարիամին մայր ուխտիս եւ միս քեռ Եղիսաբէթին: Ծնողացն Սուլթան բէկին Միհրապին Թ. ՌՃ. եւ Ժ. (1661)»: Ա. Այվազյան, Նախիջեւանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երեւան, 1987, էջ 64:

32 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1621-1640)», հ. 2, էջ 433:

կուսանոցի Մարիամ մայրապետը՝ 1655 թ. անապատի համար գնած «Աւետարան»-ի հիշատակարանում: «... Յոյժ փափագանօք եւ մեծապենչ ըղձմամբ ստացաւ զաստուածախօս մատեանս, որ յորջորջի աւետաւոր երկնից արքայութեանն, ի յիշատակ /// հոգւոյ իմոյ եւ ի փրկութիւն հոգւոց ննջեցելոց իւրոց, հօրն իւրոյ՝ Սօլթանպէկին եւ մօրն՝ Մեհրիպանին, եւ պապուն իւրոյ՝ Ծատուրին, եղբօրն իւրոյ՝ տէր Վարդան պատուական, արի եւ քաջ քահանայի, որ եռափափագ սիրով սկիզբն արար սբ. անապատիս մերոյ Աստուածածին կոչեցելոյ եւ շինեաց ի հիմանէ զամենայն շինուածսն՝ զպարիսպն եւ զեկեղեցին, զտնտեսատունն եւ զսեղանատունն, զիուցսն միաբանից եւ զայլ ամենայն շինութիւնսն՝ բազում չարչարանօք եւ նեղութեամբ: Եւ ժողովեաց բազում կուսանս եւ հաստատեաց զկարգ եւ զկրօնս նոցա, որպէս այլ անապատաց, եւ ինքն զհոգեւոր եւ զմարմնաւոր պէտս նոցա, առաւելապէս լցուցանէր շնորհօքն Քրիստոսի: Բայց // ոչ բազում ժամանակս արար ի վերայ երկրի, այլ երիտասարդական տիօք: Եւ վեցիւք ամօք աւելի մահտարժամ եղեալ, փոխեցաւ առ Քրիստոս Աստուած՝ յոյսն բնաւից եւ մեզ եթող սուգ անմխիթարելի...»[33]:

Այս հիշատակարաններում նշված են նաեւ Շոռոթի մենաստանի կույսերի անուններ: Նրանցից շատերը կուսանոցի հիմնադրի՝ Վարդան քահանայի բարեպաշտ գերդաստանից են: Այսպես՝ վերը նշված «Ժողովածու»-ի հիշատակարանում Հովհաննես վարդապետն աղաչում է աղոթքով հիշել նաեւ «զհօրաքոյրսն իմ՝ զկուսակրօն **Մարիամ** մայրապետ անապատիս եւ **զԵղիսաբեթն**, եւ զքոյրսն իմ՝ զկուսակրօն մայրապետ **Յուղիտայն** եւ զԳուլբստանն, ...զկուսակրօն **Եսթերն** եւ **զՄարիամն** եւ զայլ ամենայն առուարեան մերձաւորսն իմ՝ զկենդանիս եւ զհանգուցեալսն, յիշեցէք...»[34]:

1653 թ. նույն Հովհաննես վարդապետի պատվերով ընդօրինակված «Ոսկեփորիկ»-ում (այն ընծա է կուսանաց անապատին՝ «ի վայելումն կուսակրօն օրիորդացդ Քրիստոսի»[35]) Հովհաննես վարդապետն աղաչում է աղոթքով հիշել իր մերձավորներին՝ «զհօրաքոյրսն իմ զկուսակրօն եւ զճգնազգեացն՝ **զՄարիամն**՝ մայրապետ անապատիս», «զքոյրսն իմ՝ **զՅուղիտա** կուսակրօնն՝ մայրապետ սբ. անապատիս», եղբոր դստերը՝ «զկուսակրօն **Եսթերն**»[36]:

Այս նույն անուններին ենք հանդիպում նաեւ Հովհաննես վարդապետի՝ 1654 թ. գնած եւ Շոռոթի անապատին ընծայած «Մեկնութիւն սաղմոսաց»-ի հիշատակարանում. «Դարձեալ աղաչեմ զձեզ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զհայրն իմ՝ զտէր Վարդան քահանայն, շինող եւ պատճառ սբ. անապատիս, ...զհօրաքոյրսն իմ՝ զկուսակրօն **Մարիամն** բազմաշիատ եւ մայրապետ սբ. անապատիս, ...նաեւ զքոյրսն իմ՝ զկուսակրօն Յուղիտայն մայրապետ անապատիս, ...«զկուսակրօն **զԵսթերն** եւ **զՄարիամն**, յիշեցէք...»[37] :

33 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 672-673:
34 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1621-1640)», հ. 2, էջ 433:
35 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 571:
36 Անդ, էջ 571:
37 Անդ, էջ 596:

Շոռոթի կուսանաց անապատի մասին կարդում ենք նաեւ 1648 թ. Մարգարիտ գրչուհու ընդօրինակած «Նարեկ»-ի հիշատակարանում.

Եղեւ կատարումն այսմ մատենի,
Յերկիրս Երնջակ, գեօղս Շոռոթի,
Ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի,
Վայելչատիպ սրբոյ տաճարի:
Ի մէջ կուսանացս մենաստանի,
Սրբասուն կուսից մաքուր երամի,
Ս. Լուսաւորչի վանաց մերձկայի,
Եւ Ս. Յակոբայ մեծ հայրապետի»[38]:

Շոռոթում ընդօրինակված շատ ձեռագրերի հեղինակը Շենհերի անապատից հայտնի նույն Մարգարիտ գրչուհին է: Այս մասին են վկայում հիշատակարաններում արձանագրված գրչուհու հարազատների (հոր՝ Կիրակոս քահանայի եւ եղբայրների) կրկնվող անունները: Համադրելով նաեւ Շենհերում եւ Շոռոթում Մարգարիտ գրչուհու ընդօրինակած ձեռագրերի թվականները, կարելի է պնդել, որ նա Շոռոթ է տեղափոխվել Շենհերի անապատից: Մի հանգամանք, որ փաստում է տարբեր կուսանոցների միջեւ եղած առնչությունների մասին:

Ինչպես կուսանոցի հիմնադիր Վարդան քահանայի գերդաստանից սերված կույսերը, Մարգարիտ գրչուհին եւս ներկայացնում է հոգեւորականների բարեպաշտ մի ընտանիք: Ինչպես նշեցինք, Մարգարիտ գրչուհին հաճախ է նշում հոր՝ տեր Կիրակոսի, քահանա եղբայրների՝ տեր Ղազարի, տեր Արիստակեսի եւ տեր Ալեքսիանոսի անունները: Վերոհիշյալ «Նարեկ»-ի հիշատակարանում գրչուհին խնդրում է սիրով հիշել «Ղազար շնորհապաճոյճ քահանայն, որ վերակացու եւ ձեռնտու է ամենայն գործոյս»[39]:

Իսկ ահա 1653 թ. Մարգարիտ գրչուհու ընդօրինակած «Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացիոյ» ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Եւ արդ՝ ես Ղազար քահանայս եւ հարազատն իմ՝ տէր Արիստակէս սպասաւոր բանի, բազում սիրով ցանկացաք այսմ լուսազարդ մատենիս Հարցմանց, եւ եդուք գրել զսա ի վայելումն մեզ.... եւ ծնօղաց մերոց Կիրակոս քահանային, Թուրվանդին, եւ եղբօրն մերոյ հանգուցելոյ առ Քրիստոս Ալէքսիանոս քահանային, եւ քեռցն մեր՝ Մարգարտի՝ ծրօղի տառիս...»[40]:

1650 թ. Շոռոթում ընդօրինակված «Տօնացոյց»-ի հիշատակագիրը, որ թերեւս նույն Մարգարիտ գրչուհին է, իր մասին հայտնում է. «Դիմաթաւալ աղաչեմ զսուրբ հանդիպողսդ՝ յիշել առ միայն բարին Աստուած զեղկելի գծողս, եւ զհոգեւոր եւ զերախտաւոր դուստրն իմ զՀռիփսիմէն»[41]:

Նշվում է նաեւ, որ ձեռագիրն արված է եղբոր՝ Արիստակես քահանայի համար՝ «ի վա-

38 Անդ, էջ 303:
39 Անդ, էջ 304:
40 Անդ, էջ 551:
41 Անդ, էջ 407:

յելումն անձին իւրոյ»: Ապա նշվում են ընտանիքի մյուս բոլոր անդամների անունները[42]:

Մարգարիտ գրչուհու՝ հաճախ բանաստեղծորեն շարադրված հիշատակարանները, որքան էլ գրված են որոշակի կաղապարներով, այդուհանդերձ պատկերացում են հաղորդում նաև հեղինակի ներաշխարհի մասին: Դրանք նաև գեղեցիկ ակրոստիքոսներ են՝ գրչուհու անվամբ:

Արդեն վերը նշված «Նարեկ»-ի մեկ այլ հիշատակարանը նման մի օրինակ է, որի կենտ տողերի սկզբնատառերը վերարտադրում են՝ **ՄԱՐԳԱՐԻՏ ԳԾՈՂ**:

Մեռեալ հոգով մեղօք մաձեալ գծող գրիս,
Վիրաւորեալ համայն կողմանց կամ ի մարմնիս:
Անճարակ խոցով անբժշկելի կամ ի աշխարհիս,
Նաւաբեկեալ ծփիման հանգիստ մարմնոյ ծովակիս:
Րամեալ տպտանիմ հոգով եղկելիս ի վերայ երկրիս,
Երերիմ մեղօք տարագիր կենօք յայսմ կենցաղիս:
Գերեալ բանսարկուէն կողոպտեալ բարեաց թափուր կայ հոգիս,
Չունիմ համեմատ իմ օրինակի բոլոր աշխարհիս:
Առ ձեզ աղերսեմ, ո՛վ ընթերցողք այս սբ. մատենիս,
Որ խօսակիցէք սովաւ առ Տէր չառնել անտես զիս:
Րաբունոյ անմահ արքայէն երկ[ն]ից հայցէք գթալ յիս,
Զի միջնորդութեամբ ձերոց մաղթանաց քաղցրասցի առ յիս:
Ի բաժանմանէ հոգոյս ի մարմնոյս ցամաքի ոսկերս ի գերեզմանիս,
Հոգիս սասանի ի ժամուն ահեղ հայցեմ յիշել զիս,
Տացի ինձ մասն յաղօթից ձերոց սոսկալի ժամիս,
Եւ ցօղ արտասուաց ձերոց ցօղեսցի ի պասքեալ հոգիս:
Գոչեմ աղերսիւ առ սբ. ընթերցողքդ այսմ մատենիս,
Եւ զծնօղսն իմ յիշել առ ի Տէր բարիս:
Ծաղկափթիփ բուրասպանիս որք հանդիպիք
Եւ ճաշակէք զպտուղ սորին յոյժ քաղցրագին:
Ով դասք երամից սբ. եկեղեցոյ,
Որք զմայլիք քաղցրութեամբ սորին ճաշակոյ:
Զձեզ աղ[աչ]եմ յիշել սիրով զվեհագոյն իմ,
Հարազատն բազմագութ եւ բազմերախտ, քան զհայր եւ զմայր,
Ղազար շնորհապաճոյճ քահանայն,
Որ վերակացու եւ ձեռնտու է ամենայն գործոյս[43]:

Ակրոստիքոս (կամ հայ մատենագրության մեջ ավելի հայտնի՝ անձինք) բանաստեղծական ձևը հատուկ է եղել կուսանոցի մյուս գրչուհիներին ևս: Նրանցից է Շուշան գրչուհին. նրա հիշատակարանին անդրադարձել է Ղևոնդ Ալիշանը:

42 Տե՛ս անդ:
43 Անդ, էջ 304:

Ծարաւ վիրացս ո՛վ սրբեսցէ.
Բայց կուսածինն միթէ բժշկէ.
Ո՛վ եղկելի եւ թշուառացեալ
Անձն իմ մեղօք դատապարտեալ.
Իւթից շնորհաց Հոգւոյն եմ ծարաւեալ,
Եւ ողորմութեան Տեառն պասքեալ.
Այլ իմ հոգւով հիւանդացեալ,
Բնաւ անկար եմ մընացեալ.
Ծիւար եղէ զազիր գործով,
Ունայն գտայ բարեաց յուսով.
Առ գութ սիրոյ զձեզ յանձնելով,
Միշտ յաղօթս ձեր զմեզ յիշելով.
Նուասպ ոգով եւ խոշոր արհեստով
Ցերեսս անկեալ պաղատելով[44]:

ԺԷ. դարի հիշատակարաններից մեզ են ներկայանում նաեւ Ավետարանոցի եւ Ագուլիսի կուսանոցները:

Ավետարանոցի (Արցախ աշխարհի պատմական Վարանդա նահանգում, ներկայիս՝ ԼՂՀ տարածքում) վանքում[45] Կատարինե գրչուհու 1650 թ. ընդօրինակած Աւետարանի հիշատակարանին այս հոդվածում մասնակի կերպով արդեն իսկ անդրադարձել ենք՝ կապված միանձնուհիներին տրված «վարպետ» անվան հետ: Նշենք սակայն, որ նույն հիշատակարանն ամբողջությամբ որոշակի տեղեկություններ է հաղորդում նաեւ անապատի կույսերի ու հոգեւոր սպասավորների վերաբերյալ:

Աւետարանի գրչուհին, որ իրեն «դարիպ» է կոչում, դատելով հիշատակարանի բովանդակությունից, Ավետարանոց է տեղափոխվել Շենեհերի կուսանաց անապատից, մի հանգամանք, որ կրկին վկայում է տարբեր կուսանոցների միջեւ առնչությունների մասին: Հիշատակագիրը արձանագրում է նաեւ կուսանոցի մայրապետի եւ կույսերի անուններ. «Աւարտեցաւ սա ձեռամբ անարժան եւ մեղսանենց եւ վիրաւոր տառապեալ հոգւով **Կատարինիս**, ի երկիրս Վարանդու, կաթողիկոսութեան Աղուանից տեառն Պետրոսին, եւ եպիսկոպոսութիւն տէր Յովանիսի, եւ թագաւորութիւն շահ Ապազին, եւ իշխան՝ մալիք երկրիս մէլիք Բաղին, եւ խոստովանահայր սբ. անապատի որ մերձ գօղաքաղաքիս Աւետարանոց, եւ զՏէր Առաքեալն եւ միաբան քոյրք վանացս զկուսանուհին **Գայանէն**, որ եղեւ ծաղկող սբ. Աւետարանիս եւ համաշիրակ, ընկերակից քոյրն իմ՝ **զՀռիփսիմէն**, որ է մայր սբ. անապատիս: Արդ՝ հետ աւարտման սբ. Աւետարանիս Ե ամ եկաց սայ [առանց] կազմելո[յ] եւ ապա կազմեցաւ թուին ՌՃԳ (1654): Եւ դարձեալ աղաչեմ, աղաչեմ,

44 **Ղ. Ալիշան,** Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, էջ 354:

45 Այս կուսանոցը ԺԹ. դարի վերջին նկարագրել է Մակար եպս. Բարխուդարյանցը. «...Ամուր պատերով պարսպուած է եղել անապատիս շուրջն՝ համեմատ տեղի դիրքին, քանզի հարաւային կողմն քերծ է: Դարսպի ներսում եղել են շատ սենեակներ միաբան կուսանաց համար: Բայց այժմ տեղ տեղ աւերուած են պարսպի պատերն եւ սենեակների ամենամեծ մասն». **Մակար եպս. Բարխուդարեանց,** «Արցախ», Բագու, 1895, էջ 96:

որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով, յիշեսջիք ի մաքրափայլ եւ տեառնամերձ յաղօթս ձեր զղարիպս կրկին ղարիպացեալ հոգւով եւ մոխ[ր]աթաւալ եւ հողո[յ] հաւասար **Կապարինէս**...»[46]:

Ավեդարանոցի կուսանոցի վերաբերյալ մեկ այլ ուշագրավ վավերագիր է 1671 թ. ընդօրինակված Ավեդարանի հիշատակարանը, որ ժամանակին հրապարակել է Սարգիս արք. Ջալալյանցն իր ուղեգրություններում: Գայանե մայրապետի ձեռքով գրված այդ հիշատակարանում նշված է նաեւ կուսանոցի առաջին մայրապետ Հռիփսիմեի անունը, որ, ըստ հիշատակագրի, եղել է նաեւ կուսանոցի հիմնադիրը: Հիշատակվում են Կուսանոցի այլ երախտավորների անուններ: «Արդ այսմ Աստուածեղէն եւ երկնապարգեւ գանձիս, եւ լուսափայլ մարգարտիս եղեւ ցանկացօղ եւ եռափափագ սիրով գծագրօղ եւ ստացօղ աստուածասէրք եւ բարեպաշտուհիք սրբասնունդք եւ կուսակրօնք հարազատքն գծօղ սուրբ Աւետարանիս մայրապետն **Գայիանէ** եւ անդրանիկն իւր **Հռիփսիմէ**, որ եղեւ սկիզբն շինութեան սուրբ կուսաստանին Ղարաբաղու, որ ի գիւղաքաղաքն Աւետարանոցին ընդ հովանեաւ սուրբ Նշանին եւ այլում սրբութեանց՝ որ են ապր: Արդ ես նուաստս բնաւից եւ անարհեստս արուեստաւորաց բազմամեղ **Գայիանէս** ջերմեռանդ սիրով ծրեցի զսուրբ Աւետարանս թվին Հայոց ռճի. յիշատակ հոգւոյ ծնողին իմոյ եւ մարմնաւոր հարազատին **Հռիփսիմէին** եւ հոգեւոր հօրն իմոյ բազմաշխատ տէր Առաքելին, որ քրտնաջան երկամբք աշխատեալ է ի վերայ Անապատիս ի մանկութենէ մինչեւ ի ծերութիւն, եւ բազմերախտ Մարտիրոս Արհի եպիսկոպոսին եւ ծնողացն իմոց եւ այլ համայն ազգականաց իմոց՝ ամէն»[47]:

Ագուլիսի կուսանաց անապատի մասին հիշատակվում է 1643 թ. Շոռոթում ընդօրինակված «Ժողովածու»-ի հիշատակարանում: Հովհաննես գրիչը նշում է, որ ձեռագիրն ընդօրինակել է Շոռոթից Ագուլիս տեղափոխված Հայրապետ կրոնավորի պատվերով, «...եւ այժմ կա ի գիւղաքաղաքն Ագուլիս, ի հռչակաւոր մենաստանն եւ կուսարանն Ս. Թովմայի...»[48]:

Թերեւս, մեզ անհայտ կուսանոցի մասին է խոսվում նաեւ 1650 թ. Առինջում[49] ընդօրինակված «Վարք հարանց»-ի հիշատակարաններում: Հիշատակագիրները երկուսն են՝ Մարինոս եւ Մարիամ: «Արդ՝ գրեցաւ սա ի դառն եւ ի տրտում ժամանակի, ի գեղ Առընջու, ի դուռն Ս. Աստուածածնի, ի զումարս կուսան կանանց, ի թվականի ՌՂ. եւ Թ.»[50],- հայտնում է Մարինոս գրիչը՝ խնդրելով հիշել. «... **զՄար<մ>իամ** քեռորդին, որ զթուղթն կոկեաց եւ զկէսն գրեաց եւ ընդ իս աշխատեցաւ մինչ ի սպառ. զի եղիցի մասն նմա ընդ աջակողմեանսն...»:

46 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 627:

47 **Սարգիս արք. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մաս Բ., Տփխիս, 1858, էջ 246-247:

48 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 104:

49 «Տեղանունների բառարան»-ում «Առինջ» անվամբ բնակավայրեր գրանցված են եւ՝ Արեւելյան Հայաստանում (Կոտայքի մարզ), եւ՝ Արեւմտյան Հայաստանում, եւ՝ Նախիջեւանում: Հիշատակարանը, թերեւս, գրվել է Նախիջեւանի Առինջ գյուղում, որի Ս. Աստվածածին եկեղեցին ավերվել է 1675-1677 թթ.: Տե՛ս «Տեղանունների բառարան», հ. 1, Երեւան, 1986, էջ 327-328:

50 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 387:

Նկատենք, որ կանանց մենասպանի գոյության մասին հուշում է «ի գումարս կուսան կանանց» արտահայտությունը: Հայկազյան բառարանում «գումար» բառը բացատրվում է իբրեւ «հաւաքումն», «ժողով» «խումբ միահամուռ», ինչից կարելի է եզրահանգել, որ գրիչը խոսում է «կուսան կանանց» մի հավաքականության մասին, ինչն էլ ենթադրում է հնարավոր կուսանոցի առկայությունը հիշատակված Առինջում:

Ձեռագրի մեկ այլ հիշատակարանում արդեն Մարիամ գրչուհին է խնդրում հիշել. «...ի յերկնաթոիչ սբ. յաղօթս ձեր զստացող սորին զՅովաննէս քաջ բարունին, զերանաշնորհ, առաքինին, մաքուր կուսան սբ. աղանին, եւ զքոյրն՝ զմահտեսի կուսան **զՄարինոս** գրիչն...»[51]:

Մարիամ գրչուհուն է պատկանում նաեւ հինգ քառատողից բաղկացած չափածո մի գեղեցիկ հիշատակարան, որ ավարտվում է այս տողերով.

[Զ] ձեզ աղաչեմ եղբայրք բարի,
Որք հանդիպիք յայսմ վայրի,
Ցիշման արէք զիս արժանի,
զՄարիամս մեղօք ի լի[52]:

Վերջին կուսանաց անապատը, որ հանդիպում է ԺԷ. դարի ձեռագիր հիշատակարաններում, Նոր Ջուղայի Ս. Կատարինեի կուսանաց վանքն է, միակը մինչ այս հիշատակվածներից, որ գործել է մինչեւ Ի. դարի կեսերը: Այն հիմնվել է 1623 թվականին՝ հոչակավոր Լազարյան տոհմի նահապետ Խոջա Եղիազարի բարերարությամբ եւ գործել ավելի քան երեք հարյուրամյակ:

Այս մենասպանի անվանը նախ հանդիպում ենք Նոր Ջուղայում Հակոբ քահանայի ընդօրինակած Աւետարանի հիշատակարանում: Հիշատակագիրը նշում է, որ այն գրվել է «յիշատակ ի դուռն Ս. Աստուածածնին, որ է մերձ ի վանս Կուսանացն...», ապա եւ խնդրում է հիշել «զհոգեւոր մայրն իմ՝ **զՍանդուխտ** կրօնաւորն...»[53]:

Ս. Կատարինե կուսանաց անապատի վերաբերյալ չափազանց արժեքավոր աղբյուրներից մեկը, սակայն, նույն 1660 թվականին Հակոբ քահանայի ընդօրինակած «Խորհրդատետր»-ի հիշատակարանն է, որը գրավոր ամենահին վկայությունն է այս վանքում սարկավագուհիների առկայության մասին[54]:

Հիշատակագիրը նշում է, որ գիրքը գրվել է «...Ի քաղաքն Ըսպահան, ի գեօղն որ կոչի Ջուղայ, ի դուռն սբ. կուսին Կատարինեա ...ի խնդրոյ բարեմիտ մահդեսի **Իշխանին**, զոր բազում սիրով եւ փափագմամբ եւ գրել զսբ. խորհուրդս մտածելով զբան մարգարէի որ ասէ. «Երանի...» Եւ եւ ի վանս Կուսանացն, որ կոչի Կատարինեա...»[55]: Ապա հիշա-

51 Անդ, էջ 388:
52 Անդ, էջ 387:
53 Անդ, էջ 959:
54 Նոր Ջուղայի պատմագիր Հարություն Տեր-Հովհաննեսյանցը Ս. Կատարինեի վանքում առաջին սարկավագուհիների ձեռնադրության թվական է նշում 1851 թ. սեպտեմբերը՝ վերագրելով այն թեմակալ առաջնորդ Թադեոս արք. Բեկնազարյանին. տե՛ս «Պատմութիւն Նոր Ջուղայու որ Ցասպահան, աշխատասիրեալ ի պ. Ցարութիւնէ Թ. Տէր Ցովհաննեսանց», հ. 2, Նոր Ջուղա, 1881, էջ 226-227:
55 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660)», հ. 3, էջ 960:

փակագիրը թվարկում է Ս. Կապարինեի միանձնուհիների անունները, որոնց թվում՝ մեկ փասնյակից ավելի սարկավագուհիներ. «Դարձեալ յիշեցեք զմիաբան սբ. ուխտիս, որ են ժողովեալ զսրբասնեալ կուսանքս եւ որ ի սմա են եկամուտ, զսարկաւագուհիքն՝ **զՍառեն** եւ **Տրիսիէն**, **զՍանդուխտն** եւ փոքր **Սառէն**, **զԳայիանէն**, **Յուղիտէն**, **Մարինոսն**, **Թագուհին**, **Հռիփսիմէն**, **Եղիսաբեթն**, **Դշխոյին**, **Վարվառն**: Զմահդասիքն՝ միւս **Ուղիտէն**, զմայրապետ **Թանկիկն**, **Մարամն** եւ **Անային**, **Իշխանն**, **զՆունին** եւ զմիւս **Անային**: Եւ սպասաւորք եկեղեցւոյն՝ **Հռուփսանէն**, **Շուշանն**, **Մարթէն**, **Եպրաքսէն**, **Սուփիէն**, զմիւս **Վարվառն**, **զՆանաջանն**, միւս **Թագուհին**, միւս **Հռիփսիմէն**, **Թալիթէն**, դռնապան Մարգրիտն, բազմաշիտապ Պօղոսն, եւ հանգուցեալ միաբանք սոցին....

Յիշեցէք սբ. եկեղեցոյս զսպասաւոր **Թեկղիէն**, **Եղինարն**, **Մարամն**, **Մամարն**, յիշեցէք...»[56]:

Այսպիսով՝ հիշատակարանն ամբողջական պատկերացում է տալիս կուսանոցի ողջ կազմի վերաբերյալ: Ենթադրելի է նաեւ, որ կույսերի անվանացանկում հանդիպող Իշխան անունով կույսը հիշատակարանում իբրեւ ձեռագրի պատվիրատու նշված «բարեմիտ մահդեսի Իշխանն» է:

Ս. Կապարինեի կուսանաց վանքին վերաբերող այս հիշատակարանը, թերեւս, Հայ Եկեղեցու կուսանոցի վերաբերյալ վերջին ձեռագիր վկայություններից մեկն է:

ԺԸ.-ԺԷ. դարերի բոլոր այս հիշատակարանները, անշուշտ, չեն գծագրում Հայ Եկեղեցու կուսանոցների եւ, ընդհանրապես, կուսակրոն կանանց կեցության ամբողջական պատկերը: Սակայն դրանք տեղագրական ու ժամանակագրական տեղեկություններից զատ որոշակի պատկերացում են տալիս հայ եկեղեցական կյանքի ավանդույթների մասին՝ կուսանոցներից դուրս ուխտյալ կանանց առկայության, վանքերում միանձնուհիների ունեցած պաշտոնների եւ զբաղմունքի, երբեմն նաեւ՝ նրանց հոգեւոր աստիճանների վերաբերյալ: Իսկ որ ամենակարեւորն է, հիշատակարանները ցրում են Հայ Եկեղեցում միանձնուհիների եւ կուսանոցների տարածվածության մասին մեր մշուշոտ ու թյուր պատկերացումները: Անշուշտ, կուսանոցները Հայ Եկեղեցում մեծ տարածում չեն գտել, սակայն պատմության առանձին շրջաններում դրանք եղել են ավելին, որքան սովորաբար, կարող ենք պատկերացնել:

56 Անդ, էջ 960-961: